Արձանագրություն N 2-3

ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/7 ծածկագրով համակարգչային և գրասենյակային նյութերի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

02.12.2021թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Խաչատրյան
Կ. Բարսեղյան
Լ. Սարիբեկյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլայան

Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Գ. Հակոբյան

1. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Տ. Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Կոմպասս>> ՍՊԸ-ի և 6-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Մովսեսյան>> ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին ծանուցվել է 30.11.2021թ., առաջարկելով Կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանութոյունները, ինչն էլ արվել է վերջիններիս կողմից:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել <<ՊԱՏՐՈՆ ՌՄ>> ՍՊԸ-ին,
- 3-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել <<Նորմա Պլյուս>> ՍՊԸ-ին,
- 5-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել <<Կոմպասս>> ՍՊԸ-ին,
- 6-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել <<Մովսեսյան>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում կողմ -4, դեմ-0:

2. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Տ. Ղուկասյան

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Ընդունվել է որոշում կողմ – 4, դեմ – 0:

3. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Տ. Ղուկասյան)

3.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագրեր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ –4, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Ղուկասյան

Անդամներ՝ ---------- Գ. Խաչատրյան

---------- Կ. Բարսեղյան

---------- Է. Սարիբեկյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Նիկոլայան